

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2/23
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի մայիսի 10-ին, ժամը 11.00-ին ամփոփվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ կամ Համալսարան) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) նիստը: Խորհրդի 27 գործող անդամներից քվեարկությանը մասնակցում էին հետևյալ 22-ը.

1. Խաչատուր Աբաջյան – Խորհրդի անդամ,
2. Թոռնիկ Ալիյան – Խորհրդի անդամ,
3. Արմեն Բաբայան – Խորհրդի անդամ,
4. Գուրգեն Եղիազարյան – Խորհրդի անդամ,
5. Սերգեյ Երիցյան – Խորհրդի անդամ,
6. Վոլոդյա Էլբակյան – Խորհրդի անդամ,
7. Սարգիս Խանդանյան – Խորհրդի անդամ,
8. Աղավարդ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
9. Գոռ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
10. Հակոբ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
11. Արեգ Խոջոյան – Խորհրդի անդամ,
12. Քրիստինե Խուրշուդյան – Խորհրդի անդամ,
13. Արմեն Հարությունյան – Խորհրդի նախագահ,
14. Արմինե Հովհաննիսյան – Խորհրդի անդամ,
15. Արտյոմ Ղազարյան – Խորհրդի անդամ,
16. Կարեն Ղարախանյան – Խորհրդի քարտուղար,
17. Իրինա Ղափլանյան – Խորհրդի անդամ,
18. Գոհար Մամիկոնյան – Խորհրդի անդամ,
19. Արփինե Մկրտչյան – Խորհրդի անդամ,
20. Գագիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
21. Նունե Սարուխանյան – Խորհրդի անդամ,
22. Նունե Սիմոնյան – Խորհրդի անդամ,

Օրակարգում՝

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի ֆինանսական տարվա հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) աուդիտ իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:
2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի բյուջեի՝ 29.01.2020թ.-ին հաստատված նախագծում փոփոխություններ կատարելու հարցը:

Հարց 1

- ✓ Տեղեկություն – «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն Գնահատող հանձնաժողովի 21.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ, ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին

համապատասխանության գնահատման արդյունքում հաստատվել է հետևյալ երկու հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների թեկնածությունը՝ որպես Հիմնադրամի արտաքին աուդիտորի.

- «Բեյքեր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն (պետական գրանցման համար՝ 286.120.06585). պայմանագրի գինն է 2.688.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ գումարը,
- «Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն (պետական գրանցման համար՝ 273.120.05398). պայմանագրի գինն է 2.870.400 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ գումարը (այս ընկերության թեկնածությունը հաստատվում է այն դեպքի համար, եթե առաջինը չկնքի կամ չկատարի պայմանագիրը):

Հարցի վերաբերյալ առաջարկություն կատարեց Խորհրդի անդամ Խաչատուր Աբաջյանը: Առաջարկեց օրակարգի 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

Ընտրո՞ւմ եք «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի ֆինանսական տարվա հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) աուդիտ իրականացնող անձի հետևյալ թեկնածությունը.

Նշված առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝ որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):», իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:», ուստի հաշվի առնելով նաև ՀՀ կառավարության 14 հունիսի 2012 թվականի N 872-Ն որոշման 29-րդ կետի 5)-րդ մասի դրույթները՝ հոգաբարձուների խորհուրդի կողմից կարող է իրականացվել Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակցի ընտրություն:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ - 21 ձայն,

Դեմ - 0 ձայն,

Ձեռնպահ - 1 ձայն:

Խորհուրդը որոշեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի ֆինանսական տարվա հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) աուդիտ իրականացնող անձ ընտրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը:

Հարց 2

- ✓ Տեղեկություն –առաջարկվում է Նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ա) Հայաստանի Հանրապետությունում տարածված համավարակով եւ ՀՀ Կառավարության կողմից հայտարարված արտակարգ դրության պայմաններում որոշակի միջոցառումների սահմանափակումներով պայմանավորված՝ ՀԱԱՀ 90-

ամյակին նվիրված միջոցառումների՝ նախատեսված ծավալում անհրաժեշտաբար փոփոխություններ են եղել.

- 4-րդ տողում (Տպագրական աշխատանքներ)՝ նախատեսված 2 միլիոն ՀՀ դրամը նվազեցնել 2 միլիոն ՀՀ դրամով՝ Բյուջեի նախագծից հանելով նշված տողը,

Բ) նախատեսվում է Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տունը վերազինել՝ «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբարի (ԱԳԴԻ ՔԵՄՓ)». նախագիծն իրականացվելու է «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի (ԱՀԿՄԿ) կողմից: Ծրագրի ֆինանսավորման հիմնական մասը (77.2%) ներդրվելու է ԱՄՆ ՄԶԳ կողմից, իսկ մյուս մասը (22.8%)՝ ՀԱԱՀ և ԱՀԿՄԿ հիմնադրամների կողմից:

- 15-րդ տողում (Համաֆինանսավորման ծախսեր՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար) հավելյալ նախատեսել 25 միլիոն ՀՀ դրամ՝ ԱԳԴԻ ՔԵՄՓ ծրագրի՝ ՀԱԱՀ կողմից համաֆինանսավորման նպատակով:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ - 21 ձայն,

Դեմ - 0 ձայն,

Ձեռնպահ - 1 ձայն:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի բյուջեի՝ 29.01.2020թ.-ին հաստատված նախագծում փոփոխություններ կատարելու հարցը:

Քվեարկության արդյունքների վերաբերյալ լրացված (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով առաքված) քվեաթերթիկները կցվում են սույն արձանագրությանը և հանդիսանում են արձանագրության ամբաժանելի մասը: